



Սպառողական կրեդիտավորման պայմանագրով նախատեսված ապրանքը գնորդին չմատակարարելու դեպքում Հաճախորդի կողմից Բանկի դեմ պահանջի ներկայացում

Բանկը Հաճախորդին տրամադրվել է վարկ՝ Վաճառակետից նույնպես գնելու նպատակով: Նույնպես Հաճախորդին չի տրամադրվել, ուստի վերջինս ներկայացել է Վաճառակետ և վարկային պայմանագիրը լուծելու վերաբերյալ պահանջ ներկայացրել, իսկ Վաճառակետի աշխատակիցը հավաստիացրել է, որ պահանջը կներկայացվի Բանկին: Մեկ ամիս անց Հաճախորդը տեղեկացել է, որ վարկային պայմանագիրը չի լուծվել, ավելին՝ վարկային պարտավորությունները չկատարելու հետևանքով հաշվարկվում են տույժեր, իսկ Բանկն էլ պնդում է, որ չի ստացել պայմանագիրը միակողմանիորեն լուծելու մասին Հաճախորդի պահանջը և ոչ մի պարտավորություն չունի վերջինիս առաջ: Դիմելով Հաշտարարին՝ Հաճախորդը Բանկից պահանջել է լուծել վերոնշյալ պայմանագիրը, չպահանջել վարկային պայմանագրից բխող վճարումների կատարում, ինչպես նաև կատարել վարկի վերադասակարգում:

Հաշտարարը, վկայակոչելով մի շարք օրենսդրական ակտեր, նշել է, որ սպառողն իրավունք ունի «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով, ինչպես նաև պայմանագրով **սահմանված պահանջները ներկայացնելու անմիջապես Բանկին** այն դեպքում, երբ 1) վարկային պայմանագիրը կնքվել է մատակարար չհամարվող անձի հետ, իսկ Բանկը համաձայնել է մատակարարի հաճախորդներին տրամադրել վարկ տվյալ մատակարարից ապրանքներ գնելու նպատակով, և 2) տրամադրված վարկի միջոցով գնված **ապրանքները չեն ստացվել**, իսկ սպառողը բարեխղճորեն փորձել է օրենքով կամ պայմանագրով իրեն վերապահված իրավունքներն իրականացնել ու պահանջները ներկայացնել, սակայն մատակարարը օրենքով և պայմանագրով սահմանված կարգով և սահմաններում չի կատարել օրենքով կամ պայմանագրով սահմանված պարտավորությունները:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ առկա են Հաճախորդի կողմից իր պահանջները անմիջապես Բանկին ներկայացնելու իրավունքի իրացման համար նախատեսված բոլոր պայմանները, Հաճախորդը կարող է իր պահանջները ներկայացնել անմիջապես Բանկին, և վերջինս էլ պարտավոր է հատուցել Հաճախորդին պատճառված վնասը, տվյալ դեպքում Հաճախորդի կրած վնասը ապրանքի ձեռք բերմանը ուղղված վարկի գումարի կորուստն է, ինչպես նաև դրա վրա հաշվեգրված տոկոսներն ու տույժերը:

Այսպիսով, **Հաշտարարը բավարարել է Հաճախորդի պահանջն ընդդեմ Բանկի՝** վերջինիս պարտավորեցնելով չպահանջել պայմանագրի շրջանակներում վարկային պարտավորությունների կատարում, ինչպես նաև կատարել Հաճախորդի վարկի վերադասակարգում: